



Տաթևիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ դասախոս

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը և մագիստրատուրան՝ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտությամբ: Այնուհետև կրթությունը շարունակել է ՀՊՏՀ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ամբիոնի ասպիրանտուրայում: Երկու տարի աշխատել է Պեկինի բիզնեսի և տեխնոլոգիայի հասարակության՝ որպես այցելու գիտնական: Որպես փորձագետ և հետազոտող՝ աշխատել է մի շարք միջազգային կազմակերպություններում (EU4Culture, USAID, UNICEF, ILO, IMO և այլն): Այժմ աշխատում է նաև ՀՊՏՀ կարիերայի կենտրոնում: Հեղինակ և համահեղինակ է մի շարք գիտական հոդվածների:

 ORCID - <https://orcid.org/0000-0001-6488-2717>

ՖԵՄԻՆԻԶՄԸ ԵՎ

ՏՆՄԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

DOI: 10.52174/2579-2989_2022.1-110

Հիմնաբառեր. *Ֆեմինիզմ, չվարձատրվող աշխատանք և խնամք, սեռական խտրականություն, «տնտեսական մարդ»*

Մենք ապրում ենք տնտեսական այնպիսի մի հասարակարգում, որտեղ «ինչ-որ մի տեղ ինչ-որ մի բան սխալ է»: Տնտեսագիտության մեջ ֆեմինիզմի դերն ու նշանակությունը կարևորելը մեզ համար կարող է դառնալ ծանոթ երևույթները վերաբերելու նոր դիտարկումներ: Ինչքան էլ փորձենք խուսափել կամ արհեստականորեն երկարաձգել գործընթացը, միևնույն է, ինչ-որ մի պահի անհրաժեշտ է լինելու առերեսվել այն փաստին, որ կանանց և տղամարդկանց տարբերությունները տնտեսական մոդելների կառուցման կարևորագույն առանցքներից են, և այդ իրողության գիտակցմամբ է պայմանավորված երկու սեռի տնտեսական ներուժի առավելագույն չափով իրացումը: Ֆեմինիզմի տնտեսագիտությունը միայն կանանց մասին և կանանց համար չէ: Ինչհի, քանի որ ֆեմինիզմի տնտեսագիտության գլխավոր շարժառիթն ավելի լավ գործող տնտեսական համակարգ ունենալն է: Հետևաբար՝ բոլոր տնտեսագետները պետք է լինեն ֆեմինիստներ:

Ոչ ոք չի կարող հերքել, որ տնտեսագիտության մեջ կարևորագույն երևույթներից մեկը տնտեսական արժեքի ստեղծումն է, որի առանցքային դրևստումն աշխատանքն է, ինչի դիմաց մարդիկ եկամուտ են ստանում: Միաժամանակ, տնտեսագիտությունն ունի նաև «անտեսված» կողմ: Տնտեսագիտության հիմնադիր Ադամ Սմիթն իր հայտնի գրքում կատարում է ոչ պակաս հայտնի մի հարցադրում. «Ինչն է քո սեղանին ընթրիք դնում» (What puts dinner on your table?), որին ի պատասխան՝ ստեղծում է մի ամբողջ ուս-

մունք մարդկանց սեփական շահի վերաբերյալ: Սմիթը խոսում է մսագործի, գարեջրագործի և հացթուխի մասին: Սակայն, ինչ-որ մի «հրաշքով», նա մոռանում է այն մարդուն, որին ուղղակիորեն պարտական է սեղանին ընթրիք ունենալու համար՝ սեփական մորը:

Մարգարեթ Դուգլասն ընդամենը 28 տարեկան էր, երբ կորցրեց ամուսնուն: Մնացյալ ամբողջ կյանքը նա նվիրեց ամուրի որդուն՝ հոգ տանելով, որ վերջինս մինչև իր կյանքի ավարտը սեղանին ընթրիք ունենա և կարողանա աշխարհին նվիրել տնտեսական մտքի կարևորագույն արժեքները: Ֆեմինիզմի տնտեսագիտությունը միլիոնավոր «Մարգարեթների» մասին է, որոնց ներդրումը տնտեսական համակարգերի կայացման գործում դարեր շարունակ անտեսված է եղել տնտեսագետների կողմից:

Տնտեսագիտության մեջ ֆեմինիզմի հասկացության հիմքում հետևյալ գաղափարն է. մարդիկ, անկախ սեռական պատկանելությունից, կարևոր նշանակություն ունեն տնտեսական հարաբերությունների կայացման գործում: Դասական տնտեսագիտության մեջ ուրվագծված «տնտեսական մարդու» («Homo Economicus» կամ «Economic Man») դիմանկարին բնորոշ են «տնտեսական տղամարդուն» հատուկ գծեր, ինչը հանգեցրել է նրան, որ ուշադրությունից դուրս են մնացել տնտեսական այն կարևորագույն խնդիրները, որոնց հիմնական կրողներն ու հասցեատերերը կանայք են: Ընդհանուր առմամբ, ըստ դասական և նորդասական տնտեսագիտության մոտեցումների, կանանց կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1. Կանայք կամ ամուսնացած են, կամ ամուսնանալու են, հետևաբար՝ ունեն կամ ունենալու են երեխաներ:
2. Կանայք տնտեսապես կախում ունեն կամ պետք է կախում ունենան տղամարդկանցից:
3. Կանայք, նախընտրելի է, որ լինեն կամ պարտավոր են լինել տնային տնտեսուհիներ, որի հիմնական փաստարկը նրանց վերարտադրողական գործառույթն է:



ՆԿԱՐ 1

Մարգարեթ Դուգլասը՝ Աղամ Սմիթի մայրը

4. Կանայք ոչ արդյունավետ են աշխատանքի շուկայի համար:
5. Կանայք իռացիոնալ են, հետևաբար՝ նրանց չի կարելի վստահել կարևոր տնտեսական որոշումների ընդունումը: Ժամանակակից տնտեսական մոդելների հիմքում «տնտեսական մարդն» է կամ, այլ կերպ ասած, «տնտեսական տղամարդը», ով տնտեսական գործառնությունների ակտիվ մասնակից է, հոգում է սեփական կարիքները՝ վաստակած գումարը ծախսելով անհրաժեշտ բարիքների ձեռքբերման նպատակով, ինչպես նաև հիմնականում ներգրավված չէ տնային տնտեսության չվարձատրվող աշխատանքում կամ խնամքի իրականացման գործընթացում: Մինչդեռ, դասական տնտեսագիտության ուսումնասիրության շրջանակից դուրս են մնացել կնոջ կյանքի կարևորագույն տեսանկյունները, մասնավորապես՝ մի էական հանգամանք. բացի ինչ-որ մեկի կողակիցը, դուստրը, մայրը կամ քույրը լինելուց, կինը, առաջին հերթին, մարդ է: Այս մոտեցման պատճառով կա-

նանց ներգրավվածությունը տնտեսական կյանքում, նրանց կողմից որոշումների ընդունման շարժառիթները տնտեսագիտությունում համարվել են նորմայից (այդ պարագայում՝ տղամարդկանցից) շեղում, ինչով փորձ է արվել ռացիոնալացնելու տնտեսական համակարգից կանանց դուրս թողնելու միտումը: Որպես արդյունք՝ մոդելը, որի հիմքում «տնտեսական տղամարդն» է, չի կարող ամբողջապես նկատել, հասկանալ և լուծել բազմաթիվ խնդիրներ, որոնք ծնում են գենդերային անհավասարություն:

Արդարացի լինելու համար պետք է ասել, որ դասական տնտեսագիտությունը հաճախ ոչ ամբողջական ու ոչ լիարժեքորեն է ներկայացնում նաև տղամարդկանց առնչվող տնտեսական գործընթացները: Սա հանգեցրել է նրան, որ ֆեմինիզմի տնտեսագիտությունը դարձել է պայքարի մի ձև տնտեսական գործընթացներում սեռերի հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման համար:

Այս առումով, ֆեմինիզմի տնտեսագիտությունը նոր զարգացող և դինամիկ ուղղություն է, որը մարտահրավեր է նետում դասական տնտեսագիտության տեսությանը՝ փորձելով լրացնել վերջինիս բացթողումները: Ֆեմինիզմի տնտեսագիտության կարևորագույն հարցերը, ինչպես, օրինակ, աշխատանքի շուկայում կանանց մասնակցության աստիճանը, աշխատավարձերի տարբերությունները, տնային տնտեսություն վարելու և խնամքի արժեքը, զարգացման մեջ կանանց դերը, նպատակ ունեն տնտեսագիտական ուսմունքը տեղափոխելու մի նոր փուլ, որի հիմքում երկու սեռերի ներառականությունն է:

Ֆեմինիզմի տնտեսագիտությունը հարցականի տակ է դնում սեռային դերերի բաշխվածությունը տնտեսական գործընթացներում՝ ներկայացնելով աստիճանակարգային համակարգի վնասներն ու մարտահրավերները կանանց և տղամարդկանց համար: Ի վերջո, ֆեմինիզմը, որ-

պես ընդհանրական ուսմունք և մոտեցում, հանդես է գալիս իբրև պայքարի միջոց պատրիարքության անառողջ հասարակարգի դեմ, որտեղ խախտվում են ոչ միայն կանանց, այլև տղամարդկանց իրավունքները, անտեսվում վերջիններիս պահանջմունքները ու պարտադրվում կարծրատիպեր, որոնք վնասում են մարդկանց՝ ամբողջական ներուժով ինքնադրսևորելու իրենց կարողությունները:

Ընդհանուր առմամբ, ֆեմինիզմի տնտեսագիտությունը կարելի է ներկայացնել որպես մի ուսմունք, որի հիմքում բոլոր մարդկանց սոցիալ-տնտեսական կարիքների ապահովումն է՝ Այս հայեցակարգի կարևորությունը բացատրվում է նրանով, որ տնտեսությունը ներկայացվում է իբրև մի համակարգ, որի գործունեությունը հաճախ պայմանավորված է նաև ոչ տնտեսական երևույթների ու գործընթացների շրջանակով: Այս համատեքստում, մարդկանց գոյության և վերարտադրության, հետևաբար՝ տնտեսական արժեքի ստեղծման կարևորագույն նախապայման են դառնում ոչ միայն վճարովի, այլև չվարձատրվող աշխատանքն ու խնամքը, որոնց հիմնական «մատակարարները» կանայք են: Այլ կերպ ասած, տնտեսական արժեքը ոչ միայն շուկայում արտադրվող և սպառվող ապրանքներն ու ծառայություններն են, այլև այն, ինչ ստեղծվում է ընտանիքներում և համայնքներում՝ առավելապես կանանց կողմից:

Հատկանշական է, որ ֆեմինիզմի տնտեսագիտության տեսաբանները վերոնշյալ երևույթը հաճախ փորձում են ներկայացնել սոցիալական քողի ներքո՝ ընդգծելով կենցաղի կազմակերպման սոցիալական բաղադրիչը²: Բայցևայնպես, մեր խորին համոզմամբ՝ գենդերային հարաբերությունները յուրաքանչյուր տնտեսության կառուցվածքային հիմքն են: Հետևաբար՝ գենդերային բարեփոխումներն ուղղակիորեն անդրադառնում են տնտեսական համակարգի առողջացման վրա և հա-

¹ Nelson, J. A. (1993), 'The Study of Choice or the Study of Provisioning? Gender and the Definition of Economics', in: Ferber, M. A. and Nelson, J. A. (eds.), *Beyond Economic Man: Feminist Theory and Economics*, Chicago: Chicago University Press, pp. 23-37.
² Power, M. (2004), 'Social Provisioning as a Starting Point for Feminist Economics', *Feminist Economics*, Vol. 10, No. 3, pp. 3-19.

կառակը, իսկ մարդու սեռն ընկալվում է որպես կարևորագույն գործոն տնտեսական գործընթացները բացատրելու և հասկանալու համար: Մյուս կողմից, ֆեմինիզմը քարոզող տնտեսագետները մատնանշում են, որ այս կյանքում, այդ թվում՝ տնտեսագիտության մեջ ամեն ինչ իրականանում է գենդերային «հարթությունում»:

Ի հակադրություն վերը նշվածի, ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից տնտեսագիտական ուսմունքները, սեռային տարբերակման առումով, «կոյր» են...

Ֆեմինիզմի տնտեսագիտության հիմնական դրույթները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ. առաջին՝ տեսությունը չպետք է անդրադառնա միայն շուկայական հարաբերություններին, այլ ընտանիքներում և համայնքներում գոյություն ունեցող սիրո, պարտավորությունների, գերիշխանության, ուժի, փոխադարձ կախվածության գործոններին: Այս պարագայում, փաստորեն, եսակենտրոն թվացող «տնտեսական մարդն» այն մոդելը չէ, որի միջոցով կարելի է բացատրել տնտեսական համակարգը: Մարդկանց միջև փոխկախվածության ու փոխկապվածության շարժառիթն ավելի ճշգրիտ հիմք է հասարակության սոցիալ-տնտեսական բարեկեցության ապահովման համար:

Բացի այդ, ֆեմինիզմի տնտեսագիտության մեջ տնային տնտեսությունը չի դիտարկվում որպես տնտեսության առանձին միավոր: Փոխարենը, շեշտադրվում է այն գաղափարը, որ նույն ընտանիքի անդամների նախասիրությունները, հետաքրքրություններն ու ընտրությունները կարող են տարբերվել միմյանցից: Հետևաբար՝ որոշում ընդունողները ոչ թե տնային տնտեսություններն են, այլ անհատները, իհարկե, այն ընտանիքի և համայնքի շրջանակում, որի մաս են կազմում: Առհասարակ ֆեմինիզմի տնտեսագիտությունը հերքում է այն կարծրատիպը, որ մարդիկ ունեն անխախտ ու անփոփոխ նախասիրություններ՝ նշելով, որ մարդկանց ցանկությունների և գործողությունների վրա ուղղակի ազդեցություն ունեն սոցիալական նորմերը, որոնք անընդհատ ձևափոխվում են: Այսպիսով՝ նորդասական տնտեսագիտության այն մոտեցումը, համաձայն որի՝ մարդկանց որոշումների հիմքում առավելագույն օգտակարությունն է, իսկ նախասիրությունները պետք է ընդունել որպես տրված փոփոխական, ֆեմինիզմի տնտեսագիտության դիտանկյունից կորցնում է իր արդիականությունը: Միաժամանակ, հերքվում է արտադրության վրա հիմնված աշխատանքը՝ որպես տրնտեսական մոդել և ապացուցվում, որ երբ



ՆԿԱՐ 2

Զվարճատրվող աշխատանք կամ խնամք


մարդը խնամում կամ հոգ է տանում իր ընտանիքի անդամի մասին, առաջանում է աշխատանքի և արտադրության այլընտրանքային տեսակ, որն այս կամ այն չափով տնտեսապես նույնչափ կարևոր է, ինչպես, ասենք, վճարովի աշխատանքը:

Այս ամենի արդյունքում կարելի է ասել, որ ֆեմինիզմի տնտեսագիտությունը նախասահմանում է տնտեսական բարեկեցության ավելի լայն շրջանակ, որը ներառում է սոցիալական և անհատական մակարդակներ, ենթակառուցվածքներ ու ներդրումներ և, որ ամենակարևորն է, ներդրումներ՝ սոցիալական ենթակառուցվածքներում:

Խնամքը և չվարձատրվող այն աշխատանքը, որոնք տնային տնտեսություններում հիմնականում կատարում են կանայք, ուղղակիորեն անդրադառնում են տնտեսության գործունեության վրա: Ավելին, շուկայական հարաբերություններից դուրս՝ մարդիկ ոչ միշտ են դրսևորում նույն վարքագիծը, հետևաբար՝ նրանց գործողություններն ու շարժառիթները չի կարելի վերլուծել և գնահատել նույն գործիքակազմով: Մեյնսթրիմ տնտեսագիտության մեջ ոչ շուկայական գործունեությունը հիմնականում «արհամարհվում»

կամ որակվում է որպես ժամանց: Բայց չէ՞ որ այն, թե ինչպես են մարդիկ ծախսում իրենց «ոչ շուկայական» ժամանակը, բնորոշում է, թե ինչ կարող են նրանք անել իրենց կյանքում: Այսպես՝ ոչ շուկայական հարաբերություններում ծախսված ժամանակի պարտավորությունը սահմանափակում է այն ժամանակահատվածը, որը ծախսվում է զբաղվածության, աշխատանքի և շուկայական հարաբերությունների այլ դրսևորումների վրա: Կանանց և տղամարդկանց միջև, սեռով պայմանավորված, ամենամեծ տարբերությունն այն է, որ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում տնային տնտեսություններում չվարձատրվող աշխատանք կամ խնամք իրականացնելը ձևավորում և ձևախեղում է կանանց հնարավորություններն ու ամբողջ կյանքն ավելի շատ, քան տղամարդկանց պարագայում:

Չվարձատրվող աշխատանքն ու խնամքը չի արտացոլվում երկրի ՀՆԱ-ում: Այդուհանդերձ, տարբեր գնահատականներ վկայում են, որ տնային տնտեսություններում չվարձատրվող աշխատանքն ու խնամքը տատանվում են երկրների ՀՆԱ-ի 15-45%-ի միջև³: Այս իրավիճակում, սակայն, ցավալին այն է, որ վերջին տարիներին



ՆԿԱՐ 3

Խնամքի ադամանդը⁴

³ Folbre, N. (2015), 'Valuing Non-Market Work', UNDP Human Development Report Office, retrieved from: http://hdr.undp.org/sites/default/files/folbre_hdr_2015_final_0.pdf [accessed 9/6/2016].
⁴ Himmelweit, S. (2011), 'The Economics of Care', in: Simonetti, R. et al. (ed.), Doing Economics: People, Markets and Policy, Book 2, Part I, Milton Keynes, UK: Open University, pp. 251-307.

չվարձատրվող աշխատանքի հետ կապված քաղաքականություններին ուշադրություն դարձնելու դրդապատճառը ոչ թե կանանց զբաղվածության մակարդակի աճն է, այլ պետական լրացուցիչ եկամուտների գեներացումը: Ամեն դեպքում, կարևոր է ևս մեկ անգամ արձանագրել, որ տնտեսագիտությունը վերացական հասկացություն չէ, և այն չի կարող գոյություն ունենալ ոչ ընդհանուր առմամբ՝ առանց մարդկանց, ոչ էլ առանց նրանց 49.6%-ի՝ կանանց:

Նկար 3-ում «խնամքի ադամանդն» է, որի տարբեր հատվածներում ներկայաց-

ված են վարձատրվող և չվարձատրվող աշխատանքներ: Իհարկե, կախված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից, տրամադրվող խնամքը տարբեր է: Բայց կա մեկ համամոլորակային, գուցե նաև համատիեզերական ընդհանրություն չվարձատրվող աշխատանքի և խնամքի պարագայում. դրանք հիմնականում կատարում են կանայք: Իսկ ի՞նչ է խնդիրը: Պատասխանենք դարձյալ տնտեսագիտության օրինակով. մինչ այս պահը տնտեսագիտության գծով Նորբեյյան մրցանակ է ստացել ընդամենը երկու կին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Nelson, J. A. (1993), 'The Study of Choice or the Study of Provisioning? Gender and the Definition of Economics', in: Ferber, M. A. and Nelson, J. A. (eds.), *Beyond Economic Man: Feminist Theory and Economics*, Chicago: Chicago University Press, pp. 23–37.
2. Power, M. (2004), 'Social Provisioning as a Starting Point for Feminist Economics', *Feminist Economics*, Vol. 10, No. 3, pp. 3–19.
3. Folbre, N. (2015), 'Valuing Non-Market Work', UNDP Human Development Report Office, retrieved from: http://hdr.undp.org/sites/default/files/folbre_hdr_2015_final_0.pdf [accessed 9/6/2016].
4. Himmelweit, S. (2011), 'The Economics of Care', in: Simonetti, R. et al. (ed.), *Doing Economics: People, Markets and Policy*, Book 2, Part I, Milton Keynes, UK: Open University, pp. 251–307.

Татевик ВАРДАНИЯН

Преподаватель кафедры международных экономических отношений, АГЭУ

A ВЫ ЗНАЕТЕ, ЧТО...?

ФЕМИНИЗМ И ЭКОНОМИКА

Мы живем в экономическом обществе, где «где-то что-то не так». Объяснение роли и значения феминизма в экономике может стать новым взглядом на переосмысление знакомых явлений. Как бы мы ни старались избегать или искусственно затягивать этот процесс, в какой-то момент придется столкнуться с тем фактом, что различия между мужчинами и женщинами являются одной из ключевых осей в построении экономических моделей, направленных на максимизацию выгод. Экономика феминизма касается не только женщин, и оно не только для женщин. Почему? Потому что главная мотивация феминистской экономики — иметь лучше функционирующую экономическую систему. Поэтому все экономисты должны быть экономистами-феминистками.

Ключевые слова: *феминизм, неоплачиваемая работа и уход, гендерная дискриминация, «экономический человек»*

DO YOU KNOW THAT...?

FEMINISM AND ECONOMICS

We live in an economic society where «Somewhere something is wrong». Explaining the role and significance of feminism in economics can be a new perspective on redefining familiar phenomena. No matter how much we try to avoid or artificially prolong the process, at some point it will be necessary to confront the fact that the differences between men and women are one of the key axes in the construction of economic models, which aim to maximize the economic potential of both sexes. The feminism economics is not just about women or for women. Why? Because the main motivation of feminism economics is to have a better functioning economic system. Therefore, all economists should be feminist economists.

Key words: *feminism, unpaid work and care, gender discrimination, «Economic Man»*